Ռափայել Պատկանյան

Հայ պատանին երգում է

Հայկ ու Լևոնին մոռանանք, եղբարք,
Թափ տանք մեզանից փոշին հընության,
Վերածնենք մեր մեջ նոր կյանք ու նոր բարք,
Կեցցե՛ շատ օրեր մանուկ Հայաստան:

Կեցցե՛ շատ օրեր մանուկ Հայաստան,
Նա՝ որ դեռ միայն մեր սրտի խորքում
Ունի յուր հիմքը, ո՛չ տուն, ո՛չ կայան
Չունի տակավին բուն Հայաստանում:

Եղբա՛րք, բանը դեռ անշոշափելի
Այժմուս մեր մրտքին՝ ցընորք չի կարծենք,
Բանը կմարմնանա ու տեսանելի
Կը լինի շուտ . միայն մենք վրստահ լինենք:

Մեր հույսը միայն մեր վրրա լինի,
Չեն պետք մեզ նրպաստ մեծատուններին,
Ողորմությամբ թո՛ղ մուրացիկն ապրի,
Մուրացողրն միշտ ստրուկ է օտարին:

Կեցցե՛ Հայաստան, որ երազական
Կարծում են ծերերն . իրոք չէ՛ այդպես .
Մեր հայրենին դեռ չ՛է չվառական,

Քանի որ ունի քաջ որդիք մեզ պես:

Բա՛վ է, օտարին շատ ծառայեցինք,
Ըստրկի վիճակն չէ՛ հավերժական,
Ազատության գինն մենք քաջ սերտեցինք,
Էլ չենք հավատալ օտարի խոստման:

Օտարի շահը թույն է մահաբեր,
Աչք է կուրացնում, միտք է պըղտորում,
Գերի է դարձնում մարդ ազատասեր,
Ոսկի շըղթայով ձեռք ոտք է կապում:

Կըփըշրեմ շըղթաս, կերթամ Հայաստան,
Կըպագնեմ նորա հողը անարատ,
Կասեմ . «Եկել եմ որդիդ չվառական,
Գըրկիդ մեջ ինձ ա՛ռ, մայր իմ հարազատ:

Չունիմ ես ոսկի, այլ ոսկու մադան,
Ջըլոտ ձեռք ջուխտակ ու սիրտ անվեհեր,
Ձեռքումս ունիմ բահ ու հըրացան,
Սըրտումըս ունիմ ազնիվ խորհուրդներ:

Քու հողն արգավանդ, ես մըշակ արի,
Մենք հաշտ կու ապրինք շատ ու շատ տարի .
Ուրջուներեդ քեզ ոչինչ շահ չըկա,
Թույլ տուր, որ բըռնի հալածեմ նոցա:

Դու որդիք ունիս չորս միլիոն ու կես,
Թե հանկարծ գաղթեն՝ նոցա տեղ ունե՞ս,
Ըստինքիդ կաթը խնայե օտարեն,
Գալու որդիքըդ քաղցած, ծարավ են . . . »:

Հարավ, հյուսիսեն փոշի վերացավ . . .

Ձայն, տրոփ, խոսք, շըշուկ զիլ-զիլ լըսվեցավ . . .
Մասսա ճակատեն մեգը հեռացավ . . .
Մանուկ-Հայաստանն ոտքի կայնեցավ . . .